ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 19-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ԹԻՎ 12-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2019 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» թիվ 12-Լ հրամանով հաստատված հավելվածի

1) 2.2-րդ ենթախմբի 21-րդ կետում «կադրերի» բառը փոխարինել «կադրային քաղաքականության» բառերով,

2) 3.1-րդ ենթախմբի 4-րդ կետում «կադրերի» բառը փոխարինել «կադրային քաղաքականության» բառերով,

3) 3.1-րդ ենթախմբի 8-րդ կետում «կենտրոնի» բառից հետո լրացնել «քրեական» բառը,

4) 3.1-րդ ենթախմբի 9-րդ կետում «կադրերի» բառը փոխարինել «կադրային քաղաքականության» բառերով,

5) 3.1-րդ ենթախմբի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատվության և արխիվի բաժնի օպերատիվ հաշվառումների և արխիվի բաժանմունքի գլխավոր մասնագետ »,

6) 3.2-րդ ենթախմբի 243-րդ կետում «կադրերի» բառը փոխարինել «կադրային քաղաքականության» բառերով:

2. Հրամանը հայտարարել ՀՀ ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին և ոստիկանության քաղաքացիական հատուկ ծառայողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Վ. ՕՍԻՊՅԱՆ**

«18» հուլիսի 2019թ.
ք. Երևան